**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-20-20-1**

ք. Երևան 03.03. 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և «Ֆոր Դիրեքշնս Մոթորս» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Հակոբջանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 18000000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| --- | --- |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ֆոր Դիրեքշնս Մոթորս» ՓԲԸ |
| ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 37շ., բն. 15 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2500010721240100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02585737 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | Տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ |

**Հավելված 1**
**N ՄԱԾՁԲ-20-20-1 ծածկագրով**
**գնման պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | |
|---|---|
| **Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ծառայություններ** (Ճանապարհաշինական տեխնիկայի երաշխիքային և ետերաշխիքային ծառայությունների մատուցում) այդ թվում՝ | **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ** |
| JCB3CX, JCB4CX էքսկավատորների | Սպասարկումն և վերանորոգումը ըստ JCB3CX, JCB4CX տեխնիկաների տեխնիկական նկարագրության, շահագործման հրահանգների և վերանորոգման ձեռնարկների: |
| «ՀՅՈՒՆԴԱՅԻ» R260 LC-9S էքսկավատոր | Սպասարկումն և վերանորոգումը ըստ R260 LC-9S տեխնիկայի տեխնիկական նկարագրության, շահագործման հրահանգների և վերանորոգման ձեռնարկների: |

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Անվանումը | CPV կոդը | Չափի միավ. | Առավելա-գույն գումարը | Ծառայությունների մատուցումը ոչ ուշ 10.12.2020թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. | 4-րդ եռ. |
| **Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային պասարկման ծառայություններ** (Ճանապարհաշինական տեխնիկայի երաշխիքային և ետերաշխիքային ծառայութ-յունների մատուցում) այդ թվում՝ | 71631260/2 | Դրամ | 18000000 | 2000000 | 4000000 | 8000000 | 4000000 |

**Ծանոթություն՝** Ծառայությունների մատուցումը իրականացվելու է 2020թ. ընթացքում,ըստ ՀՀ ՋՈՒ ԻԶՎ կողմից ներկայացված հայտերի ոչ ուշ 7 (յոթ) օրացույցային օրերի ընթացքում, առավելագույն գումարը չի կարող գերազանցել 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամը:

| Հ/հ | Գնվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների կոդը | Ծառայությունների անվանումը | Կատալոգային համարը* | Չափ. միավ | Միավորի գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | 71631260/2 | Ավտոմեխանիկայի երաշ-խիքային և ետերաշխիքային սպասարկման ծառայություններ | | | |
| **Ծառայություններ** | | | | | |
| 1. | Տեխսպասարկում SU-1, SU-2 | | | հատ | 30000 |
| 2. | Տեխսպասարկում SU-3 (JCB3CX/ JCB4CX) | | | հատ | 60000 |
| 3. | Տեխսպասարկում SU-4 (JCB3CX/ JCB4CX) | | | հատ | 100000 |
| 4. | Տեխսպասարկում SU-4 (R260 LC-9S) | | | հատ | 120000 |
| 5. | Ճանապարհածախս ըստ կիլոմետրի | | | կմ | 200 |
| 6. | Փականակագործի ծառայություն | | | ժամ | 15000 |
| 7. | Փականակագործի մինիմալ ծառայություն | | | հատ | 30000 |
| 8. | Էլեկտրիկի ծառայություն | | | ժամ | 15000 |
| 9. | Էլեկտրիկի մինիմալ ծառայություն | | | հատ | 30000 |
| 10. | Հիդրոմուրճի քանդում հավաքում (JCB3CX/ JCB4CX) | | | հատ | 60000 |
| 11. | Հիդրոմուրճի քանդում հավաքում (R260 LC-9S) | | | հատ | 200000 |
| 12. | Հիդրոմուրճի ազոտի լիցքավորում | | | հատ | 40000 |
| **Սպարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող նյութերի և պահեստամասերի անվանումները*** | | | | | |
| 1. | Շարժիչի յուղ | | 15W40 | լիտր | 2200 |
| 2. | Շարժիչի յուղի զտիչ | | 320-04133 | հատ | 5000 |
| 3. | Շարժիչի յուղի զտիչ | | 11E1-70140 | հատ | 12000 |
| 4. | Վառելիքի կոշտ զտման զտիչ | | 32-925694 | հատ | 8000 |
| 5. | Վառելիքի նուրբ զտման զտիչ | | 320-07394 | հատ | 8000 |
| 6. | Վառելիքի կոշտ զտման զտիչ | | 11LB-20310 | հատ | 15000 |

---

* Ծանոթություն. Կատալոգային համարը համապատասխանում է տվյալ տեխնիկայի պահեստամասերի ձեռնարկներում նշված համարները

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | Վառելիքի նուրբ զտման զտիչ | 11E1-70010 | հատ | 10000 |
| 8. | Վառելիքի նուրբ զտման զտիչ | 11E1-70210 | հատ | 12000 |
| 9. | Օդի առաջնային զտիչ | 32-925682 | հատ | 15000 |
| 10. | Օդի երկրորդային զտիչ | 32-925683 | հատ | 7000 |
| 11. | Օդի զտիչների կոմպլեկտ | 32-925682-83 | հատ | 22000 |
| 12. | Օդի առաջնային զտիչ | 11N6-27040 | հատ | 35000 |
| 13. | Օդի երկրորդային զտիչ | 11N6-27030 | հատ | 20000 |
| 14. | Օդի զտիչների կոմպլեկտ | 11N6-27030-40 | հատ | 55000 |
| 15. | Տրանսմիսիոն յուղի զտիչ | 581-18076 | հատ | 6000 |
| 16. | Հիդրավլիկ յուղի զտիչ | 32-925346 | հատ | 15000 |
| 17. | Հիդրավլիկ յուղ | VG46 | լիտր | 2000 |
| 18. | Տրանսմիսիոն յուղ | 80W90 | լիտր | 6000 |
| 19. | Տրանսմիսիոն յուղ | 85W90 | լիտր | 6000 |
| 20. | Տրանսմիսիոն յուղ | 10W30 | լիտր | 4000 |
| 21. | Հիդրավլիկ գծային զտիչ | 31E9-0126 | հատ | 8000 |
| 22. | Հիդրավլիկ պիլոտային զտիչ | 31Q6-20340 | հատ | 18000 |
| 23. | Հիդրավլիկ բաքի օդափոխման զտիչ | 31EE-02110 | հատ | 5000 |
| 24. | Հիդրավլիկ յուղի զտիչ | 31RF-10100 | հատ | 45000 |
| 25. | Հիդրավլիկ յուղի զտիչ | 31RF-10300 | հատ | 45000 |
| 26. | Օդափոխման համակարգի զտիչ | 11Q6-90510 | հատ | 10000 |
| 27. | Ռեդուկտորի յուղ | 85W140 | լիտր | 6000 |
| 28. | Հիդրավլիկ բաքի զտիչ | 31N4-01460 | հատ | 45000 |
| 29. | Հիդրավլիկ բաքի զտիչ | 31N4-01461 | հատ | 45000 |
| 30. | Հիդրավլիկ բաքի ցանց | E131-0214 | հատ | 18000 |
| 31. | Անտիֆրիզ | | լիտր | 2500 |
| 32. | Քսայուղ 18կգ | | հատ | 70000 |
| 33. | Քսայուղ 15կգ | | հատ | 55000 |
| 34. | Քսայուղ 400գր | | հատ | 3000 |
| 35. | Քսայուղ հիդրոմուրճի 400գր | | հատ | 6000 |
| 36. | Քսայուղ տեխնիկայի հանգույցների 5կգ | | հատ | 60000 |
| 37. | Քսայուղ տեխնիկայի հանգույցների 400գր | | հատ | 10000 |
| 38. | Խցիկի օդի զտիչ | 331-25629 | հատ | 6000 |
| 39. | Օդորակիչի օդի զտիր | 30-926362 | հատ | 6000 |
| 40. | Վառելիքի հավաքական կոշտ զտման զտիչ | 32-925914 | հատ | 40000 |
| 41. | Վառելիքի հավաքական կոշտ զտման զտիչ | 32-925735 | հատ | 40000 |
| 42. | Շերեփի ատամ | 320/C4388 | հատ | 8000 |
| 43. | Շերեփի անկյունային ատամ | 320/C4389 | հատ | 12000 |
| 44. | Շերեփի անկյունային ատամ | 320/C4390 | հատ | 12000 |
| 45. | Հեղյուս մանեկ | 826-00303 | հատ | 2000 |
| 46. | Վռան | G65-0 | հատ | 3000 |
| 47. | Յուղիչ | 1450-0001 | հատ | 300 |
| 48. | Շերեփի դանակ | 123-02362 | հատ | 100000 |
| 49. | Շերեփի դանակ | 123-04023 | հատ | 100000 |
| 50. | Շերեփի մատ | 811-12400 | հատ | 15000 |
| 51. | Քփացուցիչ ոտնյակի | 123-06014 | հատ | 2000 |
| 52. | Քփացուցիչ ոտնյակի | 123-06015 | հատ | 2000 |
| 53. | Քփացուցիչ ոտնյակի (կարգավորող) | 128-10850 | հատ | 8000 |
| 54. | Քփացուցիչ ոտնյակի (կարգավորող) | 331-22380 | հատ | 4000 |
| 55. | Քփացուցիչ | 123-03215-4764 | հատ | 30000 |
| 56. | Տափօղակ | 808-00209 | հատ | 2000 |
| 57. | Տափօղակ | 808-00210 | հատ | 2000 |
| 58. | Տափօղակ | 823-00470 | հատ | 2000 |
| 59. | Տափօղակ | 823-00471 | հատ | 2000 |
| 60. | Տափօղակ | 823-00472 | հատ | 2000 |
| 61. | Տափօղակ | 823-00473 | հատ | 2000 |
| 62. | Կողային հայելի | 123-04970 | հատ | 12000 |
| 63. | Հայելու ամրակ | 123-04969 | հատ | 10000 |
| 64. | Հայելու ամրակ | 123-04968 | հատ | 10000 |
| 65. | Արգելակման կոճղակ | 15-920103 | հատ | 10000 |
| 66. | Առջևի լուսարձակ | 700-50054 | հատ | 18000 |
| 67. | Շարժափոկի ձգան | 320-08651 | հատ | 18000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 68. | Կանգազդանշանային պաշպանիչ | 331-21118 | հատ | 10000 |
| 69. | Կամրջակի կիսալիսեռ | 914-M3544 | հատ | 50000 |
| 70. | Մետաղական վռան | 808-00388 | հատ | 15000 |
| 71. | Մետաղական վռան | 809-00093 | հատ | 15000 |
| 72. | Մետաղական վռան | 809-00102 | հատ | 15000 |
| 73. | Մետաղական վռան | 809-00126 | հատ | 15000 |
| 74. | Մետաղական վռան | 809-00127 | հատ | 15000 |
| 75. | Մետաղական վռան | 809-00128 | հատ | 15000 |
| 76. | Մետաղական վռան | 809-00137 | հատ | 15000 |
| 77. | Մետաղյա մատեր | 811-50398 | հատ | 15000 |
| 78. | Մետաղյա մատեր | 811-50530 | հատ | 15000 |
| 79. | Մետաղյա մատեր | 811-70116 | հատ | 15000 |
| 80. | Մետաղյա մատեր | 811-80004 | հատ | 15000 |
| 81. | Մետաղյա մատեր | 811-80007 | հատ | 15000 |
| 82. | Մետաղյա մատեր | 811-80018 | հատ | 15000 |
| 83. | Մետաղյա մատեր | 811-90060 | հատ | 15000 |
| 84. | Շարժիչի փոկ | 320-08598 | հատ | 15000 |
| 85. | Շարժիչի փոկ | 320-08601 | հատ | 15000 |
| 86. | Շարժիչի փոկ | 320-08600 | հատ | 15000 |
| 87. | Շարժիչի փոկ | 320-08608 | հատ | 15000 |
| 88. | Ձգող հոլովակ | | հատ | 25000 |
| 89. | Հոլովակ | | հատ | 40000 |
| 90. | Ջրի պոմպ | 320-04542 | հատ | 50000 |
| 91. | Վառելիքի բարձր ճնշման մղիչ | | հատ | 1000000 |
| 92. | Վառելիքի ցածր ճնշման մղիչ | | հատ | 15000 |
| 93. | Վառելիքի զտիչի ռետինե կոմպլեկտ | | հատ | 12000 |
| 94. | Ընդարձակման բաք | | հատ | 25000 |
| 95. | Ընդարձակման բաքի կափարիչ | 333-C0880 | հատ | 5000 |
| 96. | Ջրի ռադիատոր | 30-915200 | հատ | 200000 |
| 97. | Թերմոստատ | 320-04552 | հատ | 15000 |
| 98. | Թերմոստատ | 320-04618 | հատ | 15000 |
| 99. | Թերմոստատի պատյան | | հատ | 10000 |
| 100. | Գազի ճոպան | 910-60216 | հատ | 15000 |
| 101. | Բոցամուղ | | հատ | 140000 |
| 102. | Շարժիչի բարձակ | 331-40347 | հատ | 8000 |
| 103. | Մեխանիկակն պոմպ | 320-07201 | հատ | 15000 |
| 104. | Վառելիքի պոմպի մաս | 32-925710 | հատ | 10000 |
| 105. | Կամրջակի մաս | 914-86203 | հատ | 25000 |
| 106. | Ղեկային համակարգի մաս | 126-02253 | հատ | 30000 |
| 107. | Արգելակման ֆրիկցիոններ | 450-10224-26 | կ-կտ | 110000 |
| 108. | Ձգան | | հատ | 25000 |
| 109. | Արգելակման ռետինե խտարար | | կ-կտ | 20000 |
| 110. | Կամրջակի դիֆերենցիալ | | հատ | 300000 |
| 111. | Դիֆերենցիալի սաթելիտների կոմպլեկտ | | կ-կտ | 60000 |
| 112. | Խաչուկ | 914-56401 | հատ | 15000 |
| 113. | Խաչուկ | 914-86202 | հատ | 12000 |
| 114. | Խաչուկ | 914-45301 | հատ | 15000 |
| 115. | Խաչուկ | 914-86601 | հատ | 12000 |
| 116. | Կարդանի հեղյուս | 826-00892 | հատ | 1000 |
| 117. | Խաչուկի ամրակ | | հատ | 2000 |
| 118. | Ռեդուկտորի ատամնանիվների զույգ | | հատ | 125000 |
| 119. | Անվադող R26 | | հատ | 280000 |
| 120. | Անվադող R24 | | | 280000 |
| 121. | Անվադող R18 | | հատ | 160000 |
| 122. | Դիմացի կամրջակի կցորդիչ | | հատ | 850000 |
| 123. | Առանցքակալ | 907-08300 | հատ | 15000 |
| 124. | Առանցքակալ | 907-09000 | հատ | 20000 |
| 125. | Առանցքակալ | 917-50200 | հատ | 15000 |
| 126. | Առանցքակալ | 907-52200 | հատ | 25000 |
| 127. | Առանցքակալ | 907-M6779 | հատ | 25000 |
| 128. | Առանցքակալ | 907-M7473 | հատ | 25000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 129. | Առանցքակալ | 907-50100 | հատ | 20000 |
| 130. | Առանցքակալ | 907-08400 | հատ | 15000 |
| 131. | Առանցքակալ | 907-09200 | հատ | 15000 |
| 132. | Առանցքակալ | 907-09100 | հատ | 15000 |
| 133. | Անվադողի հեղյուս | 826-00923 | հատ | 2000 |
| 134. | Անվադողի մանեկ | 106-40001 | հատ | 1000 |
| 135. | Կամրջակի ռետինե խտարար | 904-20172 | հատ | 5000 |
| 136. | Խտարար | 904-M6779 | հատ | 20000 |
| 137. | Խտարար | 904-50047 | հատ | 6000 |
| 138. | Խտարար | 904-50040 | հատ | 6000 |
| 139. | Անվակունդի պատյան | 450-12401 | հատ | 90000 |
| 140. | Կարդանային լիսեռ | 914-60181 | հատ | 100000 |
| 141. | Կարդանային լիսեռ | 914-60265 | հատ | 100000 |
| 142. | Կարդանային լիսեռ | 331-F2128 | հատ | 100000 |
| 143. | Հիդրավլիկ բարձր ճնշման պոմպ | | հատ | 600000 |
| 144. | Բաժանարարի ռետինե խտարար | | հատ | 12000 |
| 145. | Հիդրոգլանի խտարարների կոմպլեկտ | 991-20021 | կ-կտ | 20000 |
| 146. | Հիդրոգլանի խտարարների կոմպլեկտ | 991-20023 | կ-կտ | 20000 |
| 147. | Հիդրոգլանի խտարարների կոմպլեկտ | 991-20030 | կ-կտ | 20000 |
| 148. | Հիդրոգլանի խտարարների կոմպլեկտ | 332-E8224 | կ-կտ | 20000 |
| 149. | Հիդրոգլանի խտարարների կոմպլեկտ | 991-20022 | կ-կտ | 20000 |
| 150. | Յուղի ճնշման կարգավորիչ | | հատ | 60000 |
| 151. | Խտարար | 904-20140 | հատ | 10000 |
| 152. | Խտարար | 904-20336 | հատ | 15000 |
| 153. | Պատյան | 331-45731 | հատ | 30000 |
| 154. | Պատյան | 123-06097 | հատ | 30000 |
| 155. | Պատյան | 128-14725 | հատ | 30000 |
| 156. | Պատյան | 128-14726 | հատ | 30000 |
| 157. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 158. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 159. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 160. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 161. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 162. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 163. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 164. | Հիդրավլիկ գլան | | հատ | 500000 |
| 165. | Բաժանարար դիմացի | | հատ | 500000 |
| 166. | Բաժանարար հետևի | | հատ | 500000 |
| 167. | Կափույր | | հատ | 500000 |
| 168. | Կափույր | | հատ | 500000 |
| 169. | Կափույր | | հատ | 500000 |
| 170. | Կափույր | | հատ | 500000 |
| 171. | Կափույր | | հատ | 500000 |
| 172. | Գեներատոր | | հատ | 120000 |
| 173. | Ստարտեր | | հատ | 140000 |
| 174. | Շարժիչի յուղի ճնշման տվիչ | | հատ | 15000 |
| 175. | Ջրի տաքության տվիչ | | հատ | 15000 |
| 176. | Փոխանցման տուփի յուղի ճնշման տվիչ | | հատ | 15000 |
| 177. | Փոխանցման տուփի յուղի ջերմաստիճանի տվիչ | | հատ | 25000 |
| 178. | Հետևի կանգ լուսարձակ | | հատ | 12000 |
| 179. | Հետևի կանգ լուսարձակի ապակի | 700-50024 | հատ | 4000 |
| 180. | Մարտկոց | 332-H3679 | հատ | 100000 |
| 181. | Կայծման փական | 701-80184 | հատ | 20000 |
| 182. | Էլեկտրական փական | 25-222657 | հատ | 50000 |
| 183. | Էլեկտրական փական | 25-223075 | հատ | 150000 |
| 184. | Էլեկտրական փական | 25-222913 | հատ | 60000 |
| 185. | Հիդրավլիկ մուրճի փողրակ | | հատ | 40000 |
| 186. | Հիդրավլիկ մուրճի ջարդիչ | | հատ | 80000 |
| 187. | Հիդրավլիկ մուրճի խտարարներ | | հատ | 100000 |
| 188. | Վառելիքի զտիչի ապակի | 11NB-70410 | հատ | 60000 |
| 189. | Վառելիքի զտիչի պատյան | 11LD-20240 | հատ | 40000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 190. | Շերեփի ատամ | 61N8-31320 | հատ | 45000 |
| 191. | Ճապիկ | 61N8-31310GG | հատ | 32000 |
| 192. | Ճապիկ | 61NA-31310GG | հատ | 45000 |
| 193. | Շերեփի ատամ | 61NA-31320 | հատ | 75000 |
| 194. | Մատ | E262-5004 | հատ | 5000 |
| 195. | Տափօղակ | 61E5-11150 | հատ | 3000 |
| 196. | Կողային կտրիչ | 63E1-3533GG | հատ | 75000 |
| 197. | Կողային կտրիչ | 63E1-3534GG | հատ | 75000 |
| 198. | Շերեփի մատ | 61Q8-40050 | հատ | 250000 |
| 199. | Շերեփի մատ | 61Q8-40060 | հատ | 250000 |
| 200. | Օդորակիչի կոմպրեսոր | 11Q6-90040 | հատ | 300000 |
| 201. | Փոկ | 3829330 | հատ | 75000 |
| 202. | Փոկ | 3929330 | հատ | 75000 |
| 203. | Փոկ | 11N6-90250 | հատ | 10000 |
| 204. | Ռադիատոր | 11Q7-42060 | հատ | 1680000 |
| 205. | Ռադիատոր | 11Q7-42062 | հատ | 1680000 |
| 206. | Ռադիատոր | 11Q7-42063 | հատ | 1680000 |
| 207. | Հոլովակ | XKDE-01493 | հատ | 150000 |
| 208. | Հոլովակ | XKDE-02698 | հատ | 150000 |
| 209. | Հոլովակ | XKDE-02701 | հատ | 150000 |
| 210. | Գազի ճույան | 21EN-32301 | հատ | 350000 |
| 211. | Ընդարձակման բաք | 11N8-41071 | հատ | 40000 |
| 212. | Կափարիչ | 11N8-47150 | հատ | 25000 |
| 213. | Կափարիչ | MH100020 | հատ | 10000 |
| 214. | Բոցամուղ | XKDE-01181 | հատ | 225000 |
| 215. | Վառելիքի բարձր մղման մղիչ | XKDE-01324 | հատ | 2000000 |
| 216. | Վառելիքի բարձր մղման մղիչ | 4063845 | հատ | 2000000 |
| 217. | Ջրի ռետինե փողրակ | 11Q7-42031 | հատ | 80000 |
| 218. | Ջրի ռետինե փողրակ | 11Q7-42032 | հատ | 80000 |
| 219. | Ջրի ռետինե փողրակ | 11Q6-40530 | հատ | 60000 |
| 220. | Ջրի ռետինե փողրակ | 11N6-43360 | հատ | 60000 |
| 221. | Ջրի ռետինե փողրակ | 11Q7-42040 | հատ | 80000 |
| 222. | Ջրի ռետինե փողրակ | 11Q6-40470 | հատ | 50000 |
| 223. | Ջրի ռետինե փողրակ | 1BQ6-46010 | հատ | 30000 |
| 224. | Ջրի ռետինե փողրակ | 11Q7-42020 | հատ | 30000 |
| 225. | Ջրի ռետինե փողրակ | E111-2504 | հատ | 10000 |
| 226. | Ուղորդիչ անիվ | 81N6-13011GG | հատ | 850000 |
| 227. | Ուղորդիչ անիվ | 81N6-13012GG | հատ | 850000 |
| 228. | Աստղանիվ | 81EN-10013GG | հատ | 325000 |
| 229. | Աստղանիվ | 81EN-10014GG | հատ | 325000 |
| 230. | Հենասահքի հոլովակ | 81N6-11010GG | հատ | 220000 |
| 231. | Հենասահքի հոլովակ | 81Q6-11010 | հատ | 240000 |
| 232. | Հենասահքի հոլովակ | 81Q6-11011 | հատ | 220000 |
| 233. | Հենասահքի հոլովակ | 81EM-10031GG | հատ | 220000 |
| 234. | Շղթայի պաշտպանիչ | 81N6-30011GG | հատ | 120000 |
| 235. | Շղթա | 81EN-20301GG | հատ | 3430000 |
| 236. | Կցամաս | 81N6-26101 | հատ | 65000 |
| 237. | Կցամաս | 81N6-26111 | հատ | 65000 |
| 238. | Կցամաս | 81N8-26100 | հատ | 65000 |
| 239. | Կցամաս | 81N8-26102 | հատ | 65000 |
| 240. | Վռան | 81EH-20170 | հատ | 25000 |
| 241. | Վռան | 81EH-20180 | հատ | 25000 |
| 242. | Մատ | 81EH-20150 | հատ | 20000 |
| 243. | Մատ | 81EH-20160 | հատ | 20000 |
| 244. | Տափօղակ | 81N8-26180 | հատ | 8000 |
| 245. | Խտարար | 81N8-26210 | հատ | 2500 |
| 246. | Շղթայի հենակ | 81EM-28030 | հատ | 65000 |
| 247. | Հեղյուս | 81EM-20020 | հատ | 5000 |
| 248. | Մանեկ | 81N6-26620 | հատ | 2000 |
| 249. | Հիդրոգլանի ռետինե խտարար | 31Y1-32670 | կ-կտ | 50000 |
| 250. | Հիդրոգլանի ռետինե խտարար | 31Y1-32910 | կ-կտ | 50000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 251. | Հիդրոգլանի ռետինե խտարար | 31Y1-32450 | կ-կտ | 65000 |
| 252. | Հիդրոգլանի ռետինե խտարար | 31Y1-32911 | կ-կտ | 50000 |
| 253. | Հիդրավլիկ պոմպ | 31Q7-10050 | հատ | 4250000 |
| 254. | Բաժանարար | 31Q7-19110P | հատ | 5760000 |
| 255. | Բաժանարար | 31Q7-19111P | հատ | 5760000 |
| 256. | Բաժանարար | 31Q7-19112P | հատ | 5760000 |
| 257. | Ռետինե խտարար | 31N6-40950 | կ-կտ | 60000 |
| 258. | Ռետինե խտարար | 31N6-40951 | կ-կտ | 60000 |
| 259. | Ընթացքային հիդրոշարժիչ | 31Q7-40040 | հատ | 4060000 |
| 260. | Համակարգիչ | | հատ | 2400000 |
| 261. | Ռետինե խտարար | XKAY-01723 | կ-կտ | 25000 |
| 262. | Ռետինե խտարար | XKAY-02259 | կ-կտ | 25000 |
| 263. | Շրջադարձի հիդրոշարժիչ | | հատ | 6000000 |
| 264. | Կափույր | XKCH-00025 | հատ | 175000 |
| 265. | Կափույր | 31QA-20041 | հատ | 165000 |
| 266. | Կափույր | XKCH-00022 | հատ | 120000 |
| 267. | Հիդրոակումուլյատոր | 31Q6-20510 | հատ | 85000 |
| 268. | Ճնշման տվիչ | 31Q4-40830 | հատ | 85000 |
| 269. | Ճնշման տվիչ | 31Q4-40620 | հատ | 85000 |
| 270. | Ճնշման տվիչ | 31Q4-40830 | հատ | 85000 |
| 271. | Ճնշման տվիչ | 31Q4-40600 | հատ | 90000 |
| 272. | Ճնշման տվիչ | 31Q4-40610 | հատ | 90000 |
| 273. | Հիդրոակումուլյատոր | 31Q8-91670 | հատ | 600000 |
| 274. | Հիդրոակումուլյատոր | 31Q8-91680 | հատ | 600000 |
| 275. | Կափույր | XJBN-00382 | հատ | 650000 |
| 276. | Հիդրոմուրճի դրսի վռան | | հատ | 325000 |
| 277. | Հիդրոմուրճի ներսի վռան | | հատ | 150000 |
| 278. | Հիդրոմուրճի ջարդիչ | | հատ | 450000 |
| 279. | Մատ | | հատ | 50000 |
| 280. | Մատ | | հատ | 20000 |
| 281. | Հարվածիչ | | հատ | 1500000 |
| 282. | Գլան | | հատ | 2850000 |
| 283. | Հիդրոմուրճի փողրակ | | հատ | 100000 |
| 284. | Հիդրոմուրճի ներսի կափույր | | հատ | 350000 |
| 285. | Ռետինե խտարարներ | | կ-կտ | 220000 |
| 286. | Թերմոստատ | XKDE-01498 | հատ | 40000 |
| 287. | Թերմոստատ | 3864178 | հատ | 40000 |
| 288. | Հովհար | 11N6-00341 | հատ | 85000 |
| 289. | Թողարկիչ | 3863128 | հատ | 750000 |
| 290. | Ջրի մղիչ | 4891252 | հատ | 250000 |
| 291. | Տուրբոմղիչ | 4089746 | հատ | 2000000 |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ֆոր Դիրեքշնս Մոթորս» ՓԲԸ |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | Տնօրեն |
| Ն. ՅՈՒՂՅԱՆ | Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ |

Հավելված 2
N ՄԱԾՁԲ-20-20-1 ծածկագրով
գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմ-բեր | հոկտեմ-բեր | նոյեմբեր | դեկտեմ-բեր |
| 1 | **Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային պասարկման ծառայություններ** (Ճանապարհաշինական տեխնիկայի երաշխիքային և ետերաշխիքային ծառայութ-յունների մատուցում) այդ թվում՝ | 71631260/2 | 2000000 | 2000000 | 6000000 | 6000000 | 6000000 | 14000000 | 14000000 | 14000000 | 18000000 | 18000000 | 18000000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՀՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆոր Դիրեքշնս Մոթորս» ՓԲԸ
Տնօրեն

Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

**Հավելված 3**
**N ՄԱԾՁԲ-20-20-1 ծածկագրով**
**գնման պայմանագրի**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված 3.1**
**N ՄԱԾՁԲ-20-20-1 ծածկագրով**
**գնման պայմանագրի**

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն